«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՄԻԼԵՆԱ ՕՍԵՊՅԱՆ

ԽՈՒՄԲ /ԱՌԱՐԿԱ՝ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն_____3

2. Արժեքը_____4

3. Արժեքային համակարգի ձևավորման ուսումնասիրությունը և ընդհանուր բնութագիրը_____6

4. Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական

Գործընթացում_____9

5. Արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ տեխնոլոգիա առարկայի դասաժամերին_____16

6. Դասի պլան_____19

7. Եզրակացություն_____22

8. Առաջարկություններ_____25

9. Օգտագործված գրականության ցանկ_____26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական գիտության մեջ արժեքային համակարգ հասկացությունը ըմբռնում է բավական լայն շառավիղով: Տվյալ աշխատանքի ուսումնասիրվող առարկան համարվում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեխնոլոգիա առարկայի դասավանդման ընթացում:

Հետազոտության ընթացքում մենք կառընչվենք այնպիսի հարցերի, թե ինչ է իրականում իրենից ներկայացնում արժեքը, ինչպես է այն ձևավորվել,կծանոթանանք արժեքային 6 համակարգներին, կհասկանանք, թե ինչու է կարևոր սերմանել արժեքային համակարգը երեխաների մեջ թերևս վաղ տարիքից, և ինչպես դա կատարել հենց տեխնոլոգիա առարկայի դասավանդման ընթացքում:

Աշխատանքի ընթացքում մենք կանդրադառնանք բոլոր կետերին, կներկայացնենք մանրամասն պլան, թե ինչպես իրագործել արժեհամակարգի սերմանման տեխնոլոգիա առարկայի ժամանակ, և վերջապես կներկայցնենք մեր եզրակացությունները:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի: Աշխատանքը միտված է բացահայտելու և ներկայացնելու աշակերտների մեջ ձևավորված արժեքները: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

ԱՐԺԵՔԸ

Արժեքն իրի,երևույթի,մշակութային գործունեությամբ ստեղծված արդյունքի, մարդու էության,վարքի,գործունեության ու մարդկային հարաբերությունների ամբողջականության ըմբռնումն ու գնահատականն է դրանց ներքին իմաստի,դրական նշանակության,հնարավոր կատարելության ու մարդկայինի տեսակետից:

Մանկավարժական գիտության մեջ արժեքային համակարգ հասկացությունը ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Ժ. Պիաժեն անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական, քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական մի շարք իրադարձություններով պայմանավորված փոխվում են հասարակության զարգացման հիմքում ընկած կարևոր համակարգեր և ոլորտներ: Մարդկության զարգացման նոր

միտումները հանգեցնում են անձի արժեքային համակարգի, վերաբերմունքի, վարքագծի, աշխարհընկալման փոփոխությունների:

Յուրաքանչյուր անհատի արժեքների գերակայությունը տարբեր է: Ուստի կարող ենք ասել, որ կախված հասարակության նորմերից, մարդու շրջապատից և ընտանեկան կարգավիճակից արժեքային համակարգը ցանկացած մարդու համար անհատական է ու յուրովի:

Արժեքային համակարգի ձևավորման ուսումնասիրությունը և ընդհանուր բնութագիրը

Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք արժեքներ հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատում են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Դպրոցում բոլոր առարկաներն իրենց ներդրումն ունեն երեխայի արժեհամակարգի ձևավորման գործընթացում:

<<Ձեր համոզմունքները կերտում են ձեր մտքերը, ձեր մտքերը դառնում են ձեր խոսքերը, ձեր խոսքերը դառնում են ձեր գործողությունները, ձեր գործողությունները դառնում են ձեր սովորությունները, ձեր սովորությունները կերտում են ձեր արժեքները, ձեր արժեքները կերտում են ձեր ճակատագիրը>>: -Մահաթմա Գանդի

Դեռահասության տարիքում է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում: Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրա մեջ ձևավորել առողջ արժեքներ, ապագայի, հասարակության համար դաստիարակել քաղաքակիրթ քաղաքացիներ:

Մեզ շրջապատող ամբողջ աշխարհը կարելի է բաժանել երկու մասի:Առաջինը բնական աշխարհն է ,իսկ երկրորդը՝ արհեստական:

Հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը,

մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ կրթության կարևոր և անփոխարինելի մաս է կազմում արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում: Հասարակության զարգացման միտումներին, տնտեսական, քաղաքական հասարակարգերի փոփոխություններին զուգընթաց՝ արժեքների հիմնախնդիրը բերվում է կոնկրետ հետազոտական դաշտ, ստեղծվում են ուսումնասիրություններ իրականացնելու կիրառական հայեցակարգեր:

Հետազոտողների մի լայն շրջանակ ուսումնասիրում է արժեքները՝ վերջիններս դիտարկելով մշակութային տարբեր խմբերում առկա արժեքային համակարգի տարբերությունները և նմանությունները: Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է աքսիոլոգիա (հունարեն՝ ἀξία - արժեք, հունարեն՝ λόγος - բան, խոսք, բառացի՝ ուսմունք արժեքների մասին): Աքսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի մասին:2

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ. Մեսսեյը: Հեղինակը կարծում է , որ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում.

1-ին փուլ – Դրոշմի: Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մ. Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները:

2-րդ փուլ – Կրկնօրինակման: Այս փուլը ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց:

3- րդ փուլ – Սոցիալականացման: Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը : Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները:

Արժեքների ուսումնասիրության բնագավառում իր ուրույն հետազոտությունն է կատարել Շվարցը: Ըստ հեղինակի, երբ մարդ մտածում է արժեքների մասին առաջին հերթին առանձնացնում է, թե որ արժեքներն են առավել կարևոր իր համար կյանքում:

Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: : Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:Տեխնոլոգիա առարկան աշակերտների մտավոր,ֆիզիկական,ստեղծագործական և գեղագիտական զարգացման կարևոր միջոց է:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը ուղղված է նախնական աշխատանքային հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նյութերից, կենցաղային սարքերից, աշխատանքային գործիքներից և սարքավորումներից անվտանգ օգտվելու հմտությունների ձևավորմանը: Այն նպատակաուղղված է ընդլայնելու սովորողների գիտելիքները տարբեր նյութերի հատկությունների, աշխատանքային գործիքների գործառույթների, մարդու կյանքում աշխատանքի դերի, կարևորության, տարբեր մասնագիտությունների մասին, տիրապետելու նյութերի մշակման եղանակներին, գործիքներն անվտանգ կիրառելուն և նյութերն արդյունավետ օգտագործելուն: Պրակտիկ-առարկայական գործունեությունը կրտսեր դպրոցականներին հնարավորություն կտա նախապատրաստվել հետագա աշխատանքին, տարբեր նյութերի հետ աշխատելու ձևերին, դաստիարակել «նյութի յուրօրինակ զգացողություն», առանց որի անհնար է ազատ, գեղարվեստականստեղծագործական գործունեությունը:

<<Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել
մարդ կոչման հետ>>: - **Հովհաննես Թումանյան**

Տարրական դասարաններում ուսումնասիրության առանցքը նյութերն են, դրանց հատկությունների ուսումնասիրությունը, մշակման եղանակների տիրապետումը /պարզից բարդ սկզբունքով/: Առաջին և երկրորդ դասարաններում ուսումնասիրությունների հիմքը թուղթն է, բնական և արհեստական նյութերը: Մանածագործական նյութերով աշխատանքը սկսվում է երրորդ դասարանից, երբ երեխաներն արդեն նյութերի հետ աշխատելու բավականաչափ փորձ կունենան և կկարողանան անվտանգ աշխատել տարբեր տեսակի ասեղներով, մկրատներով: Աշխատանքի տեսակների ընտրությունն էլ նույն սկզբունքով է կատարվում՝ ապլիկացիա, խճանկար, օրիգամի /հարթ, ապա տարածական/, մոդուլային օրիգամի, թելանկար, կոմպոզիցիա և այլն: Չորրորդ դասարանից սկսվում է ծանոթացումը գծագրական պարզ գործիքներին, հայկական գեղարվեստական արհեստներին, դեկորատիվ-կիրառական արվեստին, հայկական զարդանախշերի իմաստային ու (Մուդրիիկ Ա. Վ, Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում, Երևան 1986) գաղափարական բովանդակությանը, գեղարվեստական շինվածքներ նախագծելու պարզագույն տեխնիկաներին: «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը միջին դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկվածություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, կիրառական տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների

ձևավորում: Այն նպատակաուղղված է ընդլայնելու աշակերտների գիտելիքները գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության մասին, ձևավորելու ձեռնարկատիրական նախնական գիտելիքներ, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ: Այն նաև նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը՝ տարբեր արհեստներին ծանոթացնելու միջոցով: Ահա հենց այս ամենի ուսումնասիրությունն էլ բերում է աշակերտի մեջ արժեքային համակարգի ձևավորմանը և զարգացմանը:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է
ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային
բաղադրիչ:

Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները եւ դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝
հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության
դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է
հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Դպրոցում ազգային արժեքների ձևավորման մեջ մեծ է հայոց պատմության
դասաժամերի դերը:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ,
հայրենասիրություն եւ ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության
իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա
քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու
ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային

պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:[7]

Հայոց պատմություն առարկայի նպատակներից ամենակարևորը, զինելն է աշակերտներին ազգային արժեքներով: Մերօրյա իրականությունը թելադրում է հայ սերնդին, առավել քան երբեք, զինվել գիտելիքով և հայրենասիրությամբ՝ մեր թուլացած պետականության հիմքերը ամրապնդելու համար: Աչքի առաջ ունենալով ծանր պատերազմի հետևանքով ունեցած մեր կորուստները, և միևնույն ժամանակ մեր զինվորների կատարած հերոսական դրվագները, գալիք սերունդը պետք է լավ գիտակցի իր վրա դրված մեծ պատասխանատվությունը: Այս գործում շատ մեծ է ուսուցիչներիս դերը և մենք անելիքներ շատ ունենք մեր սերնդին հայրենասիրությամբ և ազգային արժեքներով դաստիարակելու գործում: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև միջառարկայական կապերի կարևորության մասին: Առարկաների ճիշտ համագործակցության շնորհիվ է, որ աշակերտների մոտ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը: Կարող ենք նշել պատմություն առարկայի և գրականության կապը ներկայացնելով օրինակը <<Սասունցի Դավիթ>> էպոսը և արաբական արշավանքները: Էպոսում վեր է հանվում մի ամբողջ պատմական ժամանակահատված ներկայացնելով արաբական հարկային քաղաքականությունը, հայ ժողովրդի ազատատենչության գաղափարը: Գրականության միջոցով ներկայացվում է հերոսների հույզերը և զգացմունքները: Դարեր շարունակ էպոսը կրթել է մեր ժողովրդին՝ տալով նրան կատարյալ մարդու իր իդեալը՝ մանկական մաքուր պարզություն (անաղարտություն), արժանապատվություն, արդարամտություն, վեհանձնություն ունեցողին, որ նաև մարդասեր է, այլասեր, ժողովրդասեր, խաղաղասեր, ազատասեր, հայրենասեր, բարեկամասեր, եղբայրասեր և չարի դեմ պայքարող: Պատահական չէ սեր արմատի կրկնությունը: Այն քրիստոնեական մեր էությունը բնութագրող կարևոր պայման է: Հավատի և հույսի հետ՝ նաև սեր...Այս արժեքներն են, որ փոխանցվում են աշակերտներին և ձևավորում ամուր ու կայուն արժեքային համակարգ:

[1]Ա. Ղուկասյան , Հայոց պատմությունը 8-9 -րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, էջ 6

Այստեղ հարկ է նաև նշել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայկական «Սասունցի Դավիթ» էպոսն ընդգրկել է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում: Մեր էպոսը ճանաչվել է որպես համամարդկային մշակութային արժեք:

Արժեհամակարգի ձևավորվան համար անփոխարինելի դեր և նշանակություն ունի հայոց լեզուն և գրականությունը: Առարկաների դասավանդման ժամանակ աշակերտները ծանոթանում են հայոց լեզվին և հայ գրականության մեծանուն գրողների չնաշխարհիկ գործերին: Նրանց մոտ ձևավորվում է հատուկ վերաբերմունք դեպի համամարդկային արժեքները: Ռազմահայրենասիրություն, մշակութային արժեքներ, գեղագիտական արժեքներ, բարություն, ազնվություն, սեր, ճշմարտախոսություն, կամք, քաջություն, ազատություն....և այլ արժեքներ են սերմանում աշակերտների մեջ:

Ուսուցիչները գրականության դասաժամերին Հայ գրողների ստեղծագործությունները ներկայացնելով մի ամբողջ արժեքային ֆոնդ են փոխանցում աշակերտներին: Բավական է նշել Եղիշե Չարենցի << Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը, որը ձևավորում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սեր առ հայրենիք և սեր դեպի հայոց մեծերը՝ Նարեկացի, Քուչակ:

Մանկավարժական գործունեության մեջ մենք գործ ունենք մարդու հետ, ում պետք է առաջին հերթին մարդ մնալու արժեքը փոխանցենք: Եվ ինչպես ասել է մեծն Թումանյանը.

Անց ենք կենում… միայն անմահ

Գործն է խոսվում լավ ու վատ.

Ա՜խ, երանի՝ ո՛վ մարդ կըգա

Ու մարդ կերթա անարատ։8

Թումանյանի <<Թմկաբերդի առումը>> պոեմի գլխավոր միտքը բարի գործի անմահության գաղափարն է, որն ավելի խոր և ամբողջական է դառնում շնորհիվ պոեմում արտահայտված մյուս գաղափարների՝ հայրենասիրության և դավաճանության հակադրություն, սիրո ոգևորող և կործանիչ ուժի հաստատում, մարդկային կյանքի անցողիկության միտքը։

[2] Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4. , Երեւան, 1991։

Մարդ լինելու արժեքն է, որ ամենակարևորն է ձևավորել աշակերտի արժեքային համակարգի հիմքում, որն էլ լավագույնս փոխանցվում է լեզու/գրականության դասաժամերին։

Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է նաև <<երգ/երաժշտության>>, <<ազգային երգ ու պար>>-ի, <<տեխնոլոգիայի>>, <<շախմատ>>-ի, <<բնագիտամաթեմատիկական>>, <<ֆիզիկական կուլտուրայի>>, <<ՆԶՊ>> և մյուս առարկաների դասաժամերին։ Երեխաների մեջ սերմանվում է սեր դեպի ազգային և համաշխարհային երաժշտությունը՝ զարգացնելով նրանց մեջ ճաշակ, մտածելակերպ, վերաբերմունք և այլ հատկանիշներ երգի ժամերին։ Խնդիրները լուծելու կարողություն, ճկունություն, մտածողություն, վերլուծելու ունակություն և այլ արժեքներ ձևավորվում են բնագիտամաթեմատիկական և շախմատ առարկաների դասավանդման ընթացքում։ Շատ կարևոր է «տեխնոլոգիա» առարկայի դերը,այն ձևավորում է մշակութային ճաշակ, ճանաչողական կարողունակության, ստեղծագործական միտք, գեղագիտական ճաշակ, համագործակցելու կարողականություն, երևակայական միտք, սեփական մտքերն արտահայտելու կարողունակություն, աշխատասիրություն, գեղագիտական, ժողովրդավարական, սոցիալական, հասարակական, ընտանեկան արժեքներ։ Շատ կարևոր է նշել նաև <<ֆիզկուլտուրա>> առարկայի կարևորության մասին, սովորողներին՝ առողջ ապրելակերպի կարոնները ուսուցանելու տեսանկյունից։ Առանձնակի կարևոր է նաև<< ՆԶՊ>> առարկան։ Այն աշակերտների մեջ ձևավորում է սեր դեպի ռազմական գործը, հայրենիքը, որի կարիքը մենք ունենք, առավել քան երբեք։

Այսպիսով, բոլոր ուսումնական առարկաները ճիշտ միջառարկայական կապերի կիրառմամբ, խմբային խաղերի միջոցով, բեմականացումներով, քննարկումներով, սալիկաշարերի պատրաստմամբ, միջոցառումների անցկացմամբ, խաղերի միջոցով, ներկայիս լայն մեթոդաբանական գործիքները կիրառելով կարող են, նորովի և նոր մոտեցմամբ, աշակերտների մեջ սերմանել արժեքային մի ամբողջ համակարգ:

Արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ տեխնոլոգիա առարկայի դասաժամերին

<<Ակնթարթն էլ բավական է, որպեսզի հերոս դառնաս, սակայն մի ամբողջ կյանք է հարկավոր, որ դառնաս արժանավոր մարդ>> : _ Բրյուլա

Հանրակրթական ուսումնական հաստատությունում աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ է տեխնոլոգիա առարկայի դերը: Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար: «Տեխնոլոգիա» առարկայի նպատակը ստեղծարար, նորարար,նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր:

Տեխնոլոգիական մի շարք առաջընթացներ կամուրջ են հանդիսանում տարբեր մշակույթների միավորման համար: Մշակույթն է մեզ սովորեցնում ինչպես շփվել ուրիշների հետ, ձևավորելով արժեքներ և էթիկայի կանոններ: Այս ամենից զատ հարկ է նշել, որ հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է աշակերտների մոտ ձևավորել հարգանք դեպի օտար մշակույթը և ավանդույթները, ձևավորել գիտելիքներ օտար ժողովրդի արվեստի և արհեստի ճյուղերից: Տեխնոլոգիա առարկայի դասաժամերին արժեքային համակարգը ձևավորվում է հիմնականում համեմատականներ անցկացնելով: Օտար մշակույթը ուսումնասիրելով ձևավորում են հարգանք օտար մշակույթի ինչպես նաև սեփական մշակույթի նկատմամբ: Ձևավորում են հոգևոր արժեքներ, գնահատանք վերարժևորում են սեփական ավանդույթները:

ՈՒսումնասիրելով տարբեր երկրների տեխնոլոգիական առաջընթացները, մեծանում է ձգտումը դեպի սեփականը ավելի կատարելագործելու և արժևորելու:
Ձեռնարկատիրական կրթությունն ուսումնասիրելով տեխնոլոգիայի դասաժամերին, ձևավորվում է մտածելու կարողություն, համագործակցություն, կոլեկտիվիզմ ինչպես նաև հավատ սեփական ես-ի և գաղափարների հանդեպ: Միջին և հատկապես ավագ դասարանների տարիքային խմբին հատուկ է սոցիումի մեջ արժեքային համակարգ ձևավորելը: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:
Տեխնոլոգիա առարկան իր մեջ ներառում է արաժեքների մի մեծ փունջ, աշակերտների մեջ սերմանելով մշակութային, բարոյահոգեբանական, գեղագիտական, հոգևոր, ժողովրդավարական ձեռնարկատիրական, սոցիալական, հասարակական ընտանեկան և այլ արժեքներ:Պարզելու համար, թե որ արժեքներն են ձևավորվում աշակերտների մոտ ուսումնառության ընթացքում հարկ է կատարել հետազոտություն: Հետազոտության ընթացքում հարցմանը մասնակցել են տարրական, միջին և ավագ դպրոցի մի խումբ աշակերտներ: Կարևոր է նշել նաև, որ հետազոտությունը կատարվել է գյուղական համայնքում սովորողների շրջանում:
Հարցին, թե ո՞ր արժեքներն են ձևավորվել ձեր մեջ դպրոցում, տարրական դպրոցի աշակերտների պատասխանը հետևյալն էր.

«Զինվորը, Հայրենիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը հարգանքը, օգնել ընկերոջը, աշխատասիրությունը, կամեցողությունը, վստահությունը, ծնողասիրությունը»:

Միջին դպրոցի սովորողները նշել են հետևյալ արժեքները.

«Ընտանիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, կոլեկտիվիզմը, հարգանքը, ազատությունը՝ սեփական մտքերն ու գաղափարներն արտահայտելու, աշխատասիրությունը, մշակութային և հոգևոր արժեքները գնահատելը, վստահությունը, սերը, անկեղծությունը, հավատարմությունը, ընկերությունը»:

Ավագ դպրոցի սովորողները ներկայացրել են հետևյալ արժեքները.« Հայրենասիրությունը, վստահությունը, անկեղծությունը, կյանքը, սերը, հարգանքը, կամքը, հետաքրքրությունը, հավատարմությունը, կրթվելը, խելքը, բարությունը, միմյանց գնահատելը, հավատը առ Աստված, արժանապատվությունը, ճշտախոսությունը, կամեցողությունը, խոհեմությունը, կոլեկտիվիզմը առատաձեռնությունը, նվիրվածությունը, աշխատասիրությունը, մշակութային արժեքները գնահատելը, ազատությունը, ընկերությունը, ինքնուրույնությունը, մարդ լինելը»:

Այսպիսով, հետազոտական աշխատանք կատարելուց հետո կարող ենք ասել, որ բոլոր տարիքային խմբերում էլ ձևավորվում է այնպիսի արժեքային համակարգ, որը մեզ՝ ուսուցիչներիս լավատեսությամբ է ներշնչում: Մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն: Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը սովորողների մեջ ձևավորվում է կրթության ընթացքում ստացած տեղեկույթի միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

Դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝
Առարկա՝<<Տեխնոլոգիա>>

Դասարան՝ 5-րդ

Դասի թեմա՝<< Գեղարվեստական արհեստները Հայաստանում>>

Դասի նպատակը՝ Իմանալ փայտի գեղարվեստական մշակաման, մետաղագործական արհեստների (դարբնություն,բրոնզագործություն, պղնձագործություն, ոսկերչություն, արծաթագործություն) և այլն մասին: Իմանալ ինչ է քարագործությանը, կավագործությանը, ապակեգործությանը: Ծանոթացնել կաշվեգործության և ժանյակագործության հետ:
Վերջնարդյունք՝ Կկարողանա հասկանալ կարդացածը և վերարտադրել: Գեղագիտական և մշակութային ճաշակի ձևավորում: Կիմանա մետաղագործության, բրոնզագործության, ոսկերչության, արծաթագործության, կավագործության, կաշվեգործության, ապակեգործության, ժանյակագործության մասին:

Անհրաժեշտ նյութեր՝ նախշազարդերով փայտյա իրեր,կենցաղային իրեր որոնք պատրաստված են արծաթից, պղնձից բրոնզից: Շինությունների (տներ, բերդեր, եկեղեցիներ, կամուրջներ) նկարներ, որոնք կերտվել են քարից: Ապակուց պատրաստված զարդեր, ուլունքներ, կենցաղային իրեր: Կաշվե իրերի նմուշներ, ասեղնագործ գործվածքների նմուշներ: Մեթոդներ՝ մտագրոհ, խմբային աշխատանք, քառաբաժան:
Տևողությունը՝ (45րոպե)
Դասի ընթացքը՝ (2րոպե)
Կատարել հաշվառում, ստուգել աշակերտների պատրաստվածությունը:
Խթանման փուլ՝(5րոպե)
Ամփոփել նախորդ նյութը՝ հարցուպատասխանի միջոցով:

Ծալակցման կլանների ինչ տեսակներ գիտեք:

Ինչ է զոդումը:

Զոդման ինչ տեսակներ գիտեք:

Իմաստի ընկալման փուլ՝ (20րոպե)
<<Մտագրոհ>> մեթոդի միջոցով պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը մշակութային արժեքների մասին:

Ինչ մշակութային արժեքներ գիտեք:

Հայաստանում հանդիպել եք, որևէ մշակութային արժեքի որը ձեզ դուր է եկել:

Հանդիպել եք առօրյա օգտագործվող իրերի, որոնք պատրաստված են եղել կաշվից:

Սիրում եք ասեղնագործ աշխատանքներ:

Ինքներդ երբևիցե ասեղնագործել եք:

Աշակերտներին ծանոթացնել գեղարվեստական արհեստների հետ: Աշակերտներին բաժանել խմբերի և ամեն խմբի հանձնարարել գրել տեղեկություն գեղարվեստական արհեստների մասին: Այնուհետև աշակերտները միյասին քննարկում են իրենց խմբի աշխատանքը: Կշռադատման փուլ՝ (10րոպե)

Սովորողների գիտելիքները ամբողջացնելու և ամրապնդելու համար նրանց հետ անցկացնել խաղ-վիկտորինա LearningApps ծրագրով: Քառաբաժանի միջոցով
պարզել սովորողների զգացողությունները՝. Ինչ գիտեն, ինչը նոր իմացան, ինչն էր, որ մնաց անհասկանալի:

Ամփոփում՝ (5րոպե)
Հարցուպատասխանի միջոցով ամփոփել նոր նյութը
Կատարել գնահատում՝ (2րոպե)
Գնահատել ամենալավ ներկայացած խմբի անդամներին:

Դասի պլան

Ամիս, ամսաթիվ՝
Առարկա՝<<Տեխնոլոգիա>>

Դասարան՝ 6-րդ

Դասի թեմա՝<<Աշխատատեղի կազմակերպումը: Փորագրության գործիքներ>>:

Դասի նպատակը՝ Իմանալ ինչ կահավորանք ունի փորագրողի աշխատատեղը: Իմանալ փորագրողի հիմնական և օգնող գործիքները: Տիրապետել անվտանգության կանոններին: Վերջնարդյունք՝ Կկարողանա կահավորել փորագրողի աշխատատեղը: Կիմանա և կտարբերի փորագրման հիմնական և օգնող գործիքները: Կտիրապետի անվտանգության կանոններին: Անհրաժեշտ նյութեր՝ Փայտանյութ, փորագրության գործիքներ,

մանրահատիկ հղկաքար կամ հղկաթուղթ: (45րոպե)
Դասի ընթացքը՝

Կատարել հաշվառում, ստուգել աշակերտների պատրաստվածությունը: (2րոպե)

Խթանման փուլ՝(5րոպե)
Խթանիչ հարցերի միջոցով ամփոփել նախորդ դասը՝ <<Փայտանյութի գեղարվեստական փորագրություն>>:

Իմաստի ընկալման փուլ՝ (20րոպե)
Աշակերտներին ծանոթացնել փորագրողի աշխատատեղի կահավորանքին, նշել որ փայտի փորագրության աշխատանքներ կատարելիս շատ կարևոր է աշխատատեղի ճիշտ կազմակերպումը: Ծանոթացնել փորագրողի հիմնական և օգնող գործիքների հետ: Սովորեցնել խստորեն պահպանել անվտանգության կանոնները:

Կշռադատման փուլ՝ (10րոպե)

Սովորողների գիտելիքները ամբողջացնելու և ամրապնդելու համար կատարել նոր նյութի ամփոփում, կրկնել և վերհիշել անվտանգության կանոնները:

Հանձնարարել աշակերտներին T-աձև աղյուսակի միջոցով առանձնացնել փորագրության ժամանակ օգտագործվող գործիքները(հիմնական և օգնող):

Ամփոփում՝ (5րոպե)
Քառաբաժանի միջոցով պարզել սովորողների զգացողությունները՝. Ինչ գիտեն, ինչը նոր իմացան, ինչն էր, որ մնաց անհասկանալի:

Կատարել գնահատում՝ (2րոպե)

Եզրակացություն



Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը:

Արժեհամակարգ ձեւավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ աննկարագրելի բերկրանք է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին:

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Մարդը դրսևորվում է սոցիումի մեջ և իր վրա է կրում տվյալ միջավայրի մշակութային փոփոխությունները:

Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները:

Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:

Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:
Հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ արժեքային համակարգի ձևավորման սկզբում մեծ է ծնողների դերը: Երեխաները

ընկալում են համամարդկային արժեքները, որոնք փոխանցվում են նրանց, որպես բացարձակ իրողություն: Միջին տարիքում երեխաները ավելի շատ փնտրտուքների մեջ են: Նրանց վրա մեծ է շրջապատի ազդեցությունը: Կրկնօրինակում են իրենց հասակակիցներին, հայտնի մարդկանց, ծնողներին, և այս համատեքստում է, որ կարծես թե արժեքների ծաղկաքաղ է տեղի ունենում նրանց մոտ: Ավագ դասարաններում սովորողների արժեքային համակարգը կախված է շրջապատից, նրանց հուզական ապրումներից, զգացմունքներից, որն էլ թելադրում է որոշակի արժեհամակարգ:

Արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ, նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, ով պետք է՝ 1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը: 2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: 3. Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում. 4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը. 5. Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ. 6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը. 7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք. 8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը. 9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ. 10. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: : Օրինակ՝ խմբային աշխատանքի

ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը Մենք ապրում ենք անցումային ժամանակաշրջանում, երբ վտանգը մեծ է կորցնել հին արժեքները այն դեպքում, երբ նոր արժեքները դեռևս ճիշտ չեն ընկալվում: Այստեղ առաջանում են որոշակի դժվարություններ՝ կապված երիտասարդության արժեքային համակարգի ձևավորման և ճիշտ դաստիարակության հետ: Իսկապես վտանգ է առաջանում՝ կորցնել այն, ինչը հայկական է, ինչը ավանդական ու բարոյական է… ժողովրդի առջև կանգնում է ազգային դիմագիծը կորցնելու վտանգը: Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Առաջարկություններ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կարող ենք անել հետևյալ առաջարկությունները.

Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:

Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:

Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու:
Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:

Արժեհամակարգ լավագույնս կարող է ձևավորվել նաև.

❖ Ինտելեկտուալ խաղ-մրցույթների միջոցով:
❖ Սովորողների ինքնակրթությունը խրախուսելու միջոցով:
❖ Ականավոր գործիչների, ազգային հերոսների հետ հանդիպումներ կազմակերպելու միջոցով:
❖ Դասաժամերին ՏՀՏ գործիքների ավելի շատ կիրառության միջոցով:
❖ Կամավոր աշխատանքների մեջ աշակերտներին ընդգրկելով:

Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երեւան, 2003:
2. Ա. Ղուկասյան , Հայոց պատմությունը 8-9 -րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երեւան, 2013:
3. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 4. , Երեւան, 1991:
4. M. Rokeach, The Nature of Human Values. New York. The Free Press, 1973:
5. https://hy.scienceforming.com/10585127-what-are-human-values
6. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84#%D5%80%D5%B8%D5%A3%D6%87%D5%B8%D6%80_%D5%A1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%B6%D5%A5%D6%80
7. http://www.ysu.am/files/Article_Anush_Mkrtchyan.pdf
8. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
9. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
10. https://www.akumb.am/showthread.php/10-%D4%B1%D6%86%D5%B8%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D5%AB%D5%B4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B4%D5%BF%D6%84%D5%A5%D6%80/page57
11. https://www.goodreads.com/author/quotes/5810891.Mahatma_Gandhi